

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ՄԻԿՐՈԱՎՏՈՒԹՅՈՒՆՈՎ ԵՎ
ԱՎՏՈՒԹՅՈՒՆՈՎ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ
ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

(ՄԵԿ ՄԻԿՐՈԱՎՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՎ
ԱՎՏՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԱՄՍՎԱ
ԿՏՐՎԱԾՔՈՎ)
(նախաազիծ)

ԾԱԽՍԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Ø Վառելիքային բաղադրիչի հաշվարկ
- Ø Շարժիչի յուղի և քսանյութերի ծախսի հաշվարկ
- Ø Տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսեր
- Ø Անվադողերի փոխարինման ծախսեր
- Ø Մարտկոցի փոխարինման ծախսեր
- Ø Ամորտիզացիոն ծախսեր
- Ø Վերադիր ծախսեր
- Ø Վարորդների աշխատավարձի գծով ծախսեր
- Ø Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ

Վառելիքային բաղադրիչի հաշվարկ

Վառելիքային բաղադրիչի հաշվարկի համար հիմք հանդիսացող ցուցանիշները	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Երթուղիների քանակը /հատ/	76	68	
մեկ շրջապտույտի ընդհանուր երկարությունը /կմ/	2403	2500	
Մեկ միկրոավտոբուսային շրջապտույտի միջին երկարությունը կազմում է /կմ/	31.62 (2,403/76)	36.76 (2,500/68)	
Միկրոավտոբուսներով շրջապտույտի միջին քանակը օրական կազմում է /շրջապտույտ/	6.5 /13 երթ/	6 /12 երթ/	
Օրական միջին վազքը կկազմի՝ ներառյալ գրոյական վազքը /կմ/	220 (31.62x6.5+15)	230 (36.76x6+10)	
Մեկ ավտոտրանսպորտային միջոցի մեկ ամսվա համար աշխատանքային օրերի միջին քանակը /օր/	25	25	
Մեկ տրանսպորտային միջոցի՝ մեկ ամսում (25 օր) կատարած վազքը կկազմի /կմ/	5 500 (220x25)	5 750 (230x25)	

Վառելիքային բաղադրիչի հաշվարկ

Վառելիքային բաղադրիչի համար հիմք հանդիսացող ցուցանիշները	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Ավտոմեքենայի մակնիշը	ԳԱԶ-32213 «Գազել»	HIGER KLQ6770G	
100կմ շահագործման վառելիքի ծախսի նորման /լ կամ իսմ /	20	29.8	
մեկ ամսվա (25 օր) մեկ միկրոավտոբուսի վառելիքի ծախսը /լ կամ իսմ /	1112.1	1713.5	
Միավոր վառելիքի գինը /դրամ/	214.1	476.8	214.1
ՄԵԿ ԱՄՍՎԱ ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍԸ /ԴՐԱՄ	238 100	816 997	366 860

Հաշվարկների համար հիմք է հանդիսացել՝

- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի ու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարների կողմից համատեղ հաստատված «Ավտոմոբիլային տրանսպորտի վառելիքի և քսանյութերի ծախսի նորմաներում» արտացոլված բանաձևը:
- Ավտոբուսների համար նաև ՀՀ ներկրվելուց հետո արտադրողի ներկայացուցիչների մասնակցությամբ վառելիքի ծախսի ստուգաչափումների արդյունքները:

Շարժիչի յուղի և քսանյութերի ծախսի հաշվարկ

Շարժիչի յուղ	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Փոխարինման նորման	10000 /առաջին անգամ փոխարինումը 2000 կմ–ի դեպքում/	11000 /առաջին անգամ փոխարինումը 3000 կմ–ի դեպքում/	
Փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային ցուցանիշը /լիտր/	5.5	12.34	
1 լիտր յուղի արժեքը /դրամ/	1 215	1 215	
Ամսական ծախսը /դրամ/	6 682	14 993	
Տրանսմիսիոն յուղեր	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Փոխարինման նորման	40,000	տարբեր հանգույցների համար առանձին հաշվարկներ, ընդհանրացված հաշվարկ	
1 լիտր յուղի արժեքը /դրամ/	1.950	1.950	
Փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային ցուցանիշը /լիտր/	0.58	6.03	
Ամսական ծախսը /դրամ/	1 131	11 758	
ԸՆԴԱՄԵՆԸ ՑՈՒՂԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԸ	7 813	26 751	

- Մեկ լիտր շարժիչի յուղի արժեքի հիմքը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության օգոստոս ամսվա հրապարակված տվյալ,
- Մեկ լիտր տրանսմիսիոն յուղի արժեքի հիմքը՝ շուկայական միջինացված արժեք,
- Ավտոբուսի համար նորմատիվները հաշվարկվել են արտադրողի կողմից տրամադրված ուղեցույցերի և ստուգաչափումների հիման վրա,
- Միկրոավտոբուսի համար հիմք է ընդունվել շարժիչի շահագործման ուղեցույցի տվյալները:

Տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսեր

Տեխնիկական սպասարկման և նորոգման ամսական ծախսեր	Միկրոավտոբուս	Ավտոբուս
«Ծախսերի տեսակարար կշիռը դրանց արժեքի նկատմամբ» մեթոդով՝ ըստ ձեռնարկի գործակիցները	0.22	0.11
Տրանսպորտային միջոցի գինը /դրամ/	8 100 000	19 412 876
Ամսական ծախսերը «Ծախսերի տեսակարար կշիռը դրանց արժեքի նկատմամբ» մեթոդով /դրամ/	148 500	177 951
«100 միավորի նորմայի հաշվարկի» մեթոդով ամսական ծախսերը /դրամ/	55 967	139 917
ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԾԱԽՍԸ	55 967	139 917

- Տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսերի բաղադրիչի հաշվարկը կատարվել է 2 տարբեր մեթոդներով:
- Արժեհաշվարկի տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսերի բաղադրիչը ներառում է բոլոր տիպի տեխնիկական սպասարկումների (ամենօրյա սպասարկում SU-1, SU-2) և նորոգումների (ընթացիկ և կապիտալ) ծախսերը՝ ներառյալ պահեստամասերի, նյութերի և նորոգման աշխատանքների գծով ծախսերը:
- Ավտոբուսի համար համար տեխնիկական սպասարկման և նորոգման (ընթացիկ ու հիմնական) ծախսերի հաշվարկը «100 միավորի նորմայի հաշվարկով» հաշվարկվել է տրանսպորտային միջոցների արժեքների հարաբերակցության հիման վրա, համաձայն որի գործակիցը ստացվում է 2.5:

Անվադողերի փոխարինման ծախսեր

	Միկրոավտոբուս	Ավտոբուս
Անվադողերի շուկայական արժեքը /դրամ/	35 000	143950
Փոխարինման միջին վազքը /կմ/	60 000	80 000
Ավադողերի փոխարինման ծախսերը 1կմ-ի համար /դրամ	3.32	10.23
Մեկ ամսվա վազքը /կմ/	5 500	5 750
ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՓՈՒՍԱՐԻՆՄԱՆ ՄԵՎ ԱՄՍՎԱ ԾԱԽՍԸ /ԴՐԱՄ/	18 249	58 822

- Անվադողերի փոխարինման (մաշվածքի վերականգնման և վերանորոգման) նորման, ծախսը 1 կմ-ի համար հաշվարկվել է ձեռնարկում կիրառվող բանաձևով:
- Անվադողերի փոխարինման ծախսերը հաշվարկվել են անվադողերի փոխարինման շահագործողական վազքի նորմայի հիման վրա:

Մարտկոցի փոխարինման ծախսեր

	Միկրոավտոբուս	Ավտոբուս
Մեկ մարտկոցի շուկայական արժեքը /դրամ/	35 000	57 000
Մարտկոցի շահագործման ժամկետ /տարի/	2	2
Մարտկոցի շահագործման նվազագույն վազքը /կմ/	130 000	130 000
ՄԱՐՏԿՈՑԻ ՓՈՒՍԱՐԻՆՄԱՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԾԱԽՍԸ /ԴՐԱՄ/	1,458	4,750

Նորմատիվային ցուցանիշները սահմանված են Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության կողմից 2002 թվականի սեպտեմբերի 25-ին հաստատված ՔՃ 3112199-1089-02 նորմատիվներով և ՀՀ կառավարության 01.06.2005 թվականի №1001-Ն որոշմամբ:

Ավտոբուսների համար նախատեսվում է երկու մարտկոց, վերջնական ծախսում ներառված է երկու մարտկոցի արժեքը:

Ամորտիզացիոն ծախսեր

	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Ավտոմեքենայի մակնիշը	ԳԱԶ-32213 «Գազել»	HIGER KLQ6770G	
Ամորտիզացիոն ժամկետ /տարի/	5	10	
Տրանսպորտային միջոցի գինը /դրամ/	8 100 000	19 412 876	21 912 876
մեկ ամսվա ամորտիզացիոն ծախսը /դրամ/	135 000	161 773	182 607
ներգրավված ֆինանսական միջոցների արժեքը /դրամ/	41 175	97 873	110 477
ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ԾԱԽՍԵՐ /ԴՐԱՄ/	176 175	259 646	293 084

- Միկրոավտոբուսի գինը ներառում է նաև գազի սարքավորումների տեղադրման արժեքը:
- Հաշվարկներում ամորտիզացիոն ժամկետի ավարտից հետո միկրոավտոբուսի լիկվիդացիոն արժեք չի հաշվարկվել, քանի որ լիկվիդացիոն արժեք հաշվարկելու դեպքում պետք է հաշվարկել նաև մինչև ամորտիզացիոն ժամկետը լրանալը շահագործումից դուրս գալու բոլոր հնարավոր ռիսկերից ապահովագրելու ծախսերը (ԿԱՄԿՈ ապահովագրություն): Հաշվարկներում հիմք է ընդունվել դրանց համարժեքության սկզբունքը:
- Ներգրավված ֆինանսական միջոցների արժեքը ընդունված է հաշվարկել ցածր ռիսկայնության ֆինանսական միջոցների տրամադրման տոկոսադրույքներով: Մեր կողմից ընդունվել է 12%-ը:

Վերադիր ծախսեր

	Միկրոավտոբուս	Ավտոբուս
Տրանսպորտային միջոցի գինը /դրամ/	8 100 000	19 412 876
Վերադիր ծախսերի տեսակարար կշիռն արժեքի նկատմամբ /%/	11	5
ՄԵԿ ԱՄՍՎԱ ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐԸ /ԴՐԱՄ/	74 250	80 887

- Ուղևորափոխադրման արժեհաշվարկում վերադիր ծախսերի բաղադրիչը ներառում է ՀՀ կառավարության **16.08.2001** թվականի **762**-Ն որոշմամբ սահմանված պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը, մասնավորապես կազմակերպության գործունեության, շարժակազմի միջհերթափոխային պահպանման համար անհրաժեշտ հավաքակալայանի շահագործման, վարորդների ամենօրյա բուժզննման, ավտոտրանսպորտային միջոցների ամենօրյա վազքի հաշվառման և տեխնիկական վիճակի վերահսկման համար անհրաժեշտ ծախսերը:
- Վերադիր ծախսերը հաշվարկվել է համաձայն ձեռնարկի վերադիր ծախսերի և միկրոավտոբուսի արժեքի հարաբերակցության սկզբունքով:
- Վերադիր ծախսերը կարող են հաշվարկվել նաև փաստացի ծախսերի մեթոդով, սակայն հաշվի առնելով, որ Երևան քաղաքում առկա են երթուղիները սպասարկող տարբեր կազմակերպություններ, և մի կազմակերպության մասով փաստացի ծախսերի մեթոդով վերադիր ծախսերի հաշվարկը կարող է էականորեն տարբերվել այլ կազմակերպության ծախսերից, ուստի ընտրվել է վերադիր ծախսերի և ավտոբուսի արժեքի հարաբերակցության տարբերակը:

Վարորդների աշխատավարձի գծով ծախսեր

Վարորդների աշխատավարձերը ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների համար հաշվարկվել են նույն տրամաբանությամբ:

Հաշվարկի համար հիմք են ընդունվել հետևյալ ցուցանիշները

- Մեկ տրանսպորտային միջոցը **25** օրվա շահագործման համար պահանջվող ժամաքանակը **400** ժամ:
- Մեկ տրանսպորտային միջոցը պետք է սպասարկվի երկու վարորդների կողմից, թեև այն էական ազդեցություն չի ունենա հաշվարկների վրա:
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված **2013** թվականի օգոստոս ամսվա տվյալների համաձայն Երևան քաղաքում ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը **195 371** դրամ, որից առանց հարկերի փաստացի վճարվող գումարը կազմում է **146 495** դրամ:

Նշված ցուցանիշների հիման վրա ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մեկ ժամվա միջին աշխատավարձի չափը կազմում է **828** դրամ:

Հետևաբար մեկ միկրոավտոբուսի մեկ ամսվա շահագործման աշխատավարձի գծով ծախսը կազմում է $400 \times 828 = 331,200$ **դրամ**, որը **2** վարորդի պարագայում կկազմի **165,600** դրամ (յուրաքանչյուր վարորդի աշխատավարձը):

Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ

Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ /դրամներով/	Միկրոավտոբուս	Ավտոբուս	Հաշվարկի իրավական հիմքը
Հաստատագրված վճար	33 800	44 000	Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք
Եկամտային հարկ	82 272	82 272	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք
Գույքահարկ	890	1 333	«Գույքահարկի մասին» ՀՀ օրենք
Տեխնիկական զննման ծախսեր	2 083	3 000	«Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 28.03.2008 թվականի № 149 -Ն որոշում
Պարտադիր ապահովագրության ծախսեր	6 333	4 833	«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխաստվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք
Երթուղու սպասարկման երթակարգավարական ծառայության վճար	16 500	16 500	Երթուղու սպասարկման մրցույթի պայմաններով և կնքվող պայմանագրով
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	141 878	151 938	

Ծախսերի ամփոփ հաշվարկ

Ծախսատեսակը /դրամներով/	Միկրոավտոբուս	Ավտոբուս /դիզել/	Ավտոբուս /սեղմված բնական գազ/
Վառելիքի ծախս	238 100	816 997	366 860
Շարժիչի և տրասնմիսինոն յուղեր	7 813	26 751	26 751
Տեխնիկական սպասարկում և նորոգում	55 967	139 917	139 917
Անվադողերի փոխարինում	18 249	58 822	58 822
Մարտկոցի փոխարինում	1 458	4 750	4 750
Ամորտիզացիոն ծախսեր	176 175	259 646	293 084
Վերադիր ծախսեր	74 250	80 887	80 887
Աշխատավարձի գծով ծախսեր	331 200	331 200	331 200
Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	141 878	151 938	151 938
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՎ ԱՄՍՎԱ ԾԱԽՍԵՐԸ	1 045 090	1 870,908	1 454 209